Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ ՝ ՀՀ Շիրակի մարզի <<Արևշատի Մետաքսեի անվան միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի դասվար (16 դասաժամ) , երգ-երաժշտության/7 դասաժամ/ ուսուցչի թափուր տեղի համար:
Մրցույթն անցկացվում է երկու փուլով ՝ թեստավորման և հարցազրույցի:
Թեստավորման փուլն անցկացվում է ՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի :Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ զրույցն անցկացվում է առանձին :

Պահանջվող փաստաթղթեր

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

1. Դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3X4 չափսի,
2. Բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
3. Անձը հաստատող փաստաթուղթ,
4. «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝ (առկայության դեպքում),
5. Ինքնակենսագրություն (Ձև 5),
6. Այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
7. ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
8. Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

9. Որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ, կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2023 թվականի հունվարի 11-ից մինչև հունվարի 24-ը ներառյալ ամեն օր ժամը ժամը 9:00 –ից մինչև 15 :00-ը բացի շաբաթ , կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից :

Մրցույթը տեղի կունենա հունվարի 30-ին ՝ ժամը 12:00-ին ՀՀ Շիրակի մարզի <<Արևշատի Մետաքսեի անվան միջնակարգ դպրոց>>ՊՈԱԿ-ում :

Տեղեկությունների համար զանգահարել ՝ 094-50-97-82 հեռախոսահամարին:

Տնօրեն՝ Ս.Խաչատրյան